ՏԵՂԵԿԱՆՔ

Տեղեկանք գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 64. Ավելացված արժեքի հարկից ազատված գործարքներն ու գործառնությունները

1. ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է:

2. ԱԱՀ-ից ազատվում են Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հետևյալ գործարքներն ու գործառնությունները.

. . .

56) «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքով սահմանված՝ անձեռնմխելի կապիտալի ձևավորման և (կամ) համալրման նպատակով անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներին դրամական (այդ թվում՝ արտարժութային) միջոցների և պետական պարտատոմսերի փոխանցումը (տրամադրումը).

57) «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքով սահմանված՝ անձեռնմխելի կապիտալի կառավարումից եկամտի ստացումը:

Հոդված 126. Շահութահարկի վճարումից ազատումը

8. Շահութահարկի վճարումից ազատվում են «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքով սահմանված՝

1) անձեռնմխելի կապիտալի ձևավորման և (կամ) համալրման նպատակով անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներին փոխանցված (տրամադրված) դրամական (այդ թվում՝ արտարժութային) միջոցների և պետական պարտատոմսերի արժեքի չափով.

2) անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամտի չափով:

Հոդված 147. Նվազեցվող եկամուտները (նվազեցումները)

1. Հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում՝

. . .

40) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներից ստացվող գույքը և դրամական միջոցները: